ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ (ԾԱՅՐԱՄԱՍԱՅԻՆ) ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՔՆ ԾՁԲ-ԲԸԱՀ-14/05

ք. Երևան << 22 >> հունվարի 2014թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Մասիս Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Էյվի Թեքնոլոջիս>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ալբերտ Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է լրացուցիչ (ծայրամասային) սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 990000 (ինը հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**<<Էյվի Թեքնոլոջիս>> ՍՊԸ**
Հասցե՝ ***ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3***	Հասցե՝ ***ք. Երևան, Դ.Մայլյան նրբ. 6շ, բն.28***
հ/հ ***900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն***	հ/հ ***1930046663040100, << Կոնվերս բանկ>>***
ՀՎՀՀ 02565827	***ՀՎՀՀ 00881164***
Մ. Բաղդասարյան	**Կարապետյան**

Հավելված 1
22. 01. 2014 թ. կնքված N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ-14/05
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման
տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***
Ծառայության անվանումը՝ ***Լրացուցիչ (ծայրամասային) սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ***

Ձեռքբերվող Ծառայության նկարագիրը				
h/h	Ծառայության անվանումը	Նկարագրությունը		
u	1	2		
1.	Լրացուցիչ(ծայրամասային) սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	Համակարգիչների, տպիչների, սկաներների և այլ համակարգչային տեխնիկայի անսարքությունների ախտորոշում, տեխնիկական սպասարկում, նորոգում, տպիչ սարքերի քարթրիջների լիցքավորում, համակարգչային լիցենզիոն ծրագրային փաթեթների տեղադրում, կարգաբերում և սպասարկում:		
		h/h	Իրականացվող ծառայության անվանումը	Չափի միավորը
		u	1	2
		Համակարգչի		
		1.	Պրոֆիլակտիկա	հատ
		2.	Դիագնոստիկա	հատ
		3.	Սերվերի դիագնոստիկա	հատ
		4.	Սերվերի օպերացիոն համակարգի և գործիքային ծրագրերի տեղադրում (Win 2000 server/XPprof, server management tools	հատ
		5.	PROXY, WEB, MALL,DNS սերվերների տեղադրում կարգաբերում	հատ
		6.	Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգաբերում (Win 95/98/2000/XP, Vista NS Office, acrobat reader, fonts arm/rus, antivirus)	հատ
		7.	Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում	հատ
		8.	Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop, COR PROMT)	հատ
		9.	Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգաբերում (AUTOCAD, Matematica)	հատ
		10.	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում	հատ
		11.	BIOS-ի վերածրագրավորում	հատ
		12.	CPU-ի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		13.	MB փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		14.	CPU-ի փոխարինում կամ տեղադրում առա պահեստամասերի	հատ
		15.	RAM փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասեր	հատ
		16.	SVGA փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասե	հատ
		17.	HDD փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասեր	հատ

		18.	CD-RW, DVD-RW փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ
		19.	CD-RW, DVD-RW նորոգում	հատ
		20.	MODEM փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ
		21.	Սնուցման բլոկի նորոգում	հատ
		22.	Սնուցման բլոկի փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ
		23.	Ցանցային քարտի տեղադրում առանց պահեստամասերի	հատ
			Նոթբուքի	
		1.	Դիագնոստիկա	հատ
		2.	Պրոֆիլակտիկա	հատ
		3.	Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգաբերում (Win 95/98/2000/XP, Vista NS Office, acrobat reader, fonts arm/rus, antivirus)	հատ
		4.	Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում	հատ
		5.	Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop, COR PROMT)	հատ
		6.	Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգաբերում (AUTOCAD, Matematica)	հատ
		7.	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում	հատ
		8.	BIOS-ի վերածրագրավորում	հատ
		9.	CPU, RAM փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ
		10.	HDD փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ
			Մոնիտորի	
		1.	Դիագնոստիկա	հատ
		2.	Վերանորոգում՝ վնասված մասերի փոխարինում	հատ
		3.	TDKC փոխարինում առանց TDKC	հատ
		4.	LCD մատրիցայի փոխարինում	հատ
			Անխափան սնուցման սարքի	
		1.	Դիագնոստիկա	հատ
		2.	Ղեկավարող սալիկի վերանորոգում	հատ
		3.	Մարտկոցի փոխարինում առանց մարտկոցի	հատ
			Լազերային տպիչի	
		1.	Դիագնոստիկա	հատ
		2.	Պրոֆիլակտիկա	հատ
		3.	Վերանորոգում առանց պահեստամասերի	հատ
		4.	Մաքրող դանակի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		5.	Լիցքավորում առանց տոների	հատ
		6.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		7.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		8.	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		9.	Վառարանի տետինե լիսեռի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		10.	Լիցքավորում լազերային տպիչների (գունավոր) ներառյալ	հատ

			քարթրիջի չիպը, կամ համարժեքը	
		11.	Բաժանիչ հարթակի փոխարինում	հատ
		12.	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման առանց պահեստամասերի	հատ
			Թանաքաշիթային տպիչի	
		1.	Դիագնոստիկա	հատ
		2.	Պրոֆիլակտիկա	հատ
		3.	Վերանորոգում առանց պահեստամասերի	հատ
			Պատճենահանող սարքի	
		1.	Դիագնոստիկա սև	հատ
		2.	Պրոֆիլակտիկա սև	հատ
		3.	Դիագնոստիկա գունավոր	հատ
		4.	Պրոֆիլակտիկա գունավոր	հատ
		5.	Վերանորոգում առանց պահեստամասերի սև	հատ
		6.	Վերանորոգում առանց պահեստամասերի գունավոր	հատ
		7.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում առա պահեստամասերի	հատ
		8.	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում առա պահեստամասերի	հատ
		9.	Թմբուկի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		10.	Աքաների լամպի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		11.	Վառարանի լամպի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		12.	Շարժիչի շարժաբերի ատամնանիվի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
		13.	Կարուտրոնի լարի փոխարինում	հատ
		14.	Վառարանի ատամնանիվի փոխարինում առա պահեստամասերի	հատ
		15.	Կարուտրոնի բլոկի փոխարինում	հատ

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
22 .01.2014թ.	25.12.2014թ.

Կատարողը եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն գնացուցակի (հավելված N 4), որի հիման վրա կազմվում է մատուցված ծառայությունների վճարման փաստաթղթերը:

Պատվիրատու

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Հասցե՝ ***ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3***
h/h ***900[illegible], ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական [illegible]***
ՀՎՀՀ ***02585827***

_______ **Ծ. Ղաղդասարյան**

Կատարող

<<Էյվի Թեքնոլոջիս>> ՍՊԸ

Հասցե՝ ***ք. Երևան, Դ.Մալյան նրբ. 6շ, բն.28***
h/h ***1930046663040100, << Կոնվերս բանկ>> ՓԲԸ***
ՀՎՀՀ ***00881164***

_______ **Ա. Կարապետյան**

“AV TECHNOLOGIES” 00881164

Հավելված 2
22. 01. 2014 թ. կնքված N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ-14/05
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանում, բաժին 06, խումբ 06, դաս 01***
Ծառայության անվանումը՝ ***Լրացուցիչ (ծայրամասային) սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ***

N	Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Լրացուցիչ (ծայրամասային) սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	**4252**		198.0	198.0	445.5	445.5	445.5	742.5	742.5	742.5	990.0	990.0	990.0	**990.0**
ԸՆԴԱՄԵՆԸ															**990.0**

Պ ա տ վ ի ր ա տ ու | **Կ ա տ ա ր ո ղ**

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Հասցե՝ ***ք. Երևան, կառավարական տուն թիվ 3***
հ/հ ***900011004360, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն***
հվհհ՝ ***02562937***

Մ. Քաղդասարյան

Կ.Տ.

<<Էյվի Թեքնոլոջիս>> ՍՊԸ

Հասցե՝ ***ք. Երևան, Դ.Մալյան նրբ. 6շ, բն.28***
հ/հ ***1930040663040100, << Կոնվերս բանկ>> ՓԲԸ***
հվհհ ***00881164***

Ա. Կարապետյան

Կ.Տ.

Հավելված 3
22. 01. 2014 թ. կնքված N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ-14/05
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<հունվարի>> 2014 թ.
Պայմանագրի համարը՝ N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ - 14/05
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության տնտեսական բաժնի պետ Ա. Տեր-Հարությունյանի և Կատարողը՝ ի դեմս <<Էյվի Թեքնոլոջիս >> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Կարապետյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4
22 · 01. 2014 թ. կնքված N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԾՁԲ-14/05
ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Լրացուցիչ (ծայրամասային) սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների

h/h	Իրականացվող ծառայության անվանումը	Չափի միավորը	Միավորի արժեքը (դրամ)
1	1	2	3
	Համակարգչի		
1.	Պրոֆիլակտիկա	հատ	1500
2.	Դիագնոստիկա	հատ	1500
3.	Սերվերի դիագնոստիկա	հատ	5000
4.	Սերվերի օպերացիոն համակարգի և գործիքային ծրագրերի տեղադրո (Win 2000 server/XPprof, server management tools)	հատ	4500
5.	PROXY, WEB, MALL,DNS սերվերների տեղադրում և կարգաբերում	հատ	5000
6.	Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգաբերում (Win 95/98/2000/XP, Vista NS Office, acro reader, fonts arm/rus, antivirus)	հատ	2000
7.	Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում	հատ	4000
8.	Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop, COREL, PROMT)	հատ	1500
9.	Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգաբերում (AUTOCAD, Matematica)	հատ	1500
10.	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում	հատ	2000
11.	BIOS-ի վերածրագրավորում	հատ	2000
12.	CPU-ի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	1000
13.	MB փոխարինում առանց պահեստամասերի	հատ	2000
14.	CPU-ի փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	2000
15.	RAM փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	500
16.	SVGA փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	1000
17.	HDD փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	1000
18.	CD-RW, DVD-RW փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	1000
19.	CD-RW, DVD-RW նորոգում	հատ	1000
20.	MODEM փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	500
21.	Սնուցման բլոկի նորոգում	հատ	1500
22.	Սնուցման բլոկի փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	1000
23.	Ցանցային քարտի տեղադրում առանց պահեստամասերի	հատ	1000
	Նոթբուքի		
1.	Դիագնոստիկա	հատ	1500
2.	Պրոֆիլակտիկա	հատ	2000
3.	Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի	հատ	4000

	տեղադրում և կարգաբերում (Win 95/98/2000/XP, Vista NS Office, acro reader, fonts arm/rus, antivirus)		
4.	Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում	հատ	2000
5.	Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop, COREL, PROMT)	հատ	1500
6.	Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգաբերում (AUTOCAD, Matematica)	հատ	1500
7.	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում	հատ	2500
8.	BIOS-ի վերածրագրավորում	հատ	1000
9.	CPU, RAM փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	3500
10.	HDD փոխարինում կամ տեղադրում առանց պահեստամասերի	հատ	1500
	Մոնիտորի		
1.	Դիագնոստիկա	հատ	1500
2.	Վերանորոգում՝ վնասված մասերի փոխարինում	հատ	5000
3.	TDKC փոխարինում առանց TDKC	հատ	4000
4.	LCD մատրիցայի փոխարինում	հատ	5000
	Անխափան սնուցման սարքի		
1.	Դիագնոստիկա	հատ	1000
2.	Ղեկավարող սալիկի վերանորոգում	հատ	3000
3.	Մարտկոցի փոխարինում առանց մարտկոցի	հատ	1000
	Լազերային տպիչի		
1.	Դիագնոստիկա	հատ	1500
2.	Պրոֆիլակտիկա	հատ	1500
3.	Վերանորոգում առանց պահեստամասերի	հատ	3500
4.	Մաքրող դանակի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	2000
5.	Լիցքավորում առանց տոների	հատ	1500
6.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	1500
7.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	4000
8.	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	3500
9.	Վառարանի տետինե լիսեռի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	3500
10.	Լիցքավորում լազերային տպիչների (գունավոր) ներառյալ քարթրիջի չիպը, կամ համարժեքը	հատ	14500
11.	Բաժանիչ հարթակի փոխարինում	հատ	2000
12.	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման առանց պահեստամասե	հատ	2000
	Թանաքաշիթային տպիչի		
1.	Դիագնոստիկա	հատ	1500
2.	Պրոֆիլակտիկա	հատ	2000
3.	Վերանորոգում առանց պահեստամասերի	հատ	2000
	Պատճենահանող սարքի		
1.	Դիագնոստիկա սև	հատ	1500
2.	Պրոֆիլակտիկա սև	հատ	2500
3.	Դիագնոստիկա գունավոր	հատ	2500
4.	Պրոֆիլակտիկա գունավոր	հատ	3500
5.	Վերանորոգում առանց պահեստամասերի սև	հատ	5000
6.	Վերանորոգում առանց պահեստամասերի գունավոր	հատ	6000

7.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	2500
8.	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	2500
9.	Թմբուկի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	3000
10.	Սքաների լամպի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	3000
11.	Վառարանի լամպի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	3000
12.	Շարժիչի շարժաբերի ատամնանիվի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	4000
13.	Կարոտրոնի լարի փոխարինում	հատ	3000
14.	Վառարանի ատամնանիվի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	3000
15.	Կարոտրոնի բլոկի փոխարինում	հատ	3000

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Հասցե՝ ***ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3***
h/h ***900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն***
h/h 08565827

Մ. Բաղդասարյան

Կ ա տ ա ր ո ղ

<<Էյվի Թեքնոլոջիս>> ՍՊԸ

Հասցե՝ ***ք. Երևան, Դ.Մալյան նրբ. 6շ, բն.28***
h/h ***1930046663040100, << Կոնվերս բանկ>>***
ՓԲԿ
h/h 00881164

Լ. Կարապետյան